



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2009թ. թիվ 191-Ա

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ
ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-րդ և 464-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ կետի, 67-րդ, 68-րդ հոդվածների, ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.15. կետի «ա» ենթակետով՝

1. Հաստատել Լոռու մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս պետական սեփականություն հանդիսացող հողամասերը հրապարակային սակարկությունների /աճուրդային կարգով/ միջոցով վաճառելու կանոնակարգը համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Կանոնակարգի համաձայն հաստատել աճուրդով օտարման ենթակա հողամասերի չափերը և մեկնարկային գները համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Աճուրդի կազմակերպման և անցկացման լիազորված անձ նշանակել մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչության/ պետ Ռոբերտ Քոչարյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ *Ս. Բաբայան* Ա.ՔՈՉԱՐՅԱՆ

2009թ. հուլիսի 8
թ. Վանաձոր



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կանոնակարգը սահմանում է Լոռու մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս պետական սեփականություն հանդիսացող հողամասերը հրապարակային սակարկությունների /աճուրդային կարգով/ միջոցով վաճառելու գործընթացի իրավական կարգավորումը:

2. Աճուրդի կազմակերպումը և իրականացումը

2.1. Աճուրդի կազմակերպիչը Լոռու մարզպետն է, կամ նրա կողմից լիազորված անձը, որը իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ գործող օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով:

2.2. Լոռու մարզպետը սահմանում է աճուրդի մեկնարկային գինը՝ որը չի կարող պակաս լինել տվյալ հողամասի կադաստրային արժեքի 50%-ից:

2.3. Կազմակերպիչը աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով /այսուհետ Հայաստանի Հանրապետություն օրաթերթ / հրապարակում է սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները /գյուղատնտեսական հողամասերի դեպքում նաև որակական հատկանիշները/, ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ սերվիտուտների/ առկայությունը:

2.4. Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդի կազմակերպիչներին ներկայացնում են հայտ, անձնագիր, իրավաբանական անձանց դեպքում իրավաբանական անձի գրանցման պետական ռեգիստրի վկայական և կանոնադրություն:

2.5. Նախքան աճուրդի բացումը մասնակիցները իրավունք ունեն ծանոթանալ աճուրդի մասին ծանուցման մեջ նշված վաճառվելիք լոտին /լոտերին/: Լոտն ուսումնասիրելու համար մասնակիցները կարող են մինչև աճուրդի օրը ցանկացած աշխատանքային օր դիմել աճուրդի կազմակերպիչներին սկսած ժամը 9.00-ից մինչև 17.00:

2.6. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից երեք օր առաջ: Աճուրդն անցկացվում է փակ, որին մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը:

2.7. Աճուրդի մասնակիցները աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գինի 5%-ի չափով: Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ:

2.8. Աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է: Աճուրդն սկսվում է, եթե սակարկության մասնակիցների թիվը մեկից ավելի է: Առաջին անգամ աճուրդը չկայանալու դեպքում երկրորդ աճուրդը կազմակերպվում և անցկացվում է առաջին անգամ սահմանված կարգով ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդի, որն անցկացվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում, ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության հրապարակայնությունը: